Ջ Ր Ա Յ Ի Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Հ Ր Ա Մ Ա Ն

12 մայիսի 2020 թվականի N 50 -Ա

ՆՈՐ ԿԱԶՄՈՎ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 41-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդված 1-ին մասով և հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով՝

   Կ. Սարգսյան – Կոմիտեի նախագահ (ներքին աուդիտի կոմիտեի նախագահ),

   Կ. Դաղբաշյան – Կոմիտեի նախագահի տեղակալ,

   Հ. Խաչատրյան – Կոմիտեի իրավաբանական բաժնի պետ,

   Ս. Ասրյան –Կոմիտեի ներքին աուդիտի բաժնի պետ (ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի 2019 թվականի ապրիլի 17-ի <<Ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների

նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 8-ի N 101-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 41-Ա հրամանը:

3. Սույն հրամանի հսկողությունը վերապահում եմ ինձ:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. մայիսի 12
Երևան